600.0258.11.07.12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

11 հուլիսի 2012 թվականի N258Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 1999 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N8 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետը, 25-րդ, 30-րդ հոդվածները և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 1999 թվականի հունիսի 10-ի N8 որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) Ուժը կորցրած ճանաչել Որոշման 2-րդ կետով «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության N0002 լիցենզիայի պայմանների 6.13, 6.18 և 6.20 կետերը.
   2) Որոշման 3-րդ կետով «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված՝ համապատասխանաբար, էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության N0003 և ջերմային էներգիայի արտադրության N0014 լիցենզիաների պայմաններում (այսուհետ՝ Պայմաններ) կատարել հետևյալ փոփոխությունները.

      ա. Պայմանների 6.9 կետը շարադրել նոր խմբագրությամբ.

      «6.9 Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ է ներկայացնում Հանձնաժողով, ինչպես նաև տեղեկատվություններ՝

1) տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների կողմից կատարված ստուգումների արդյունքների մասին,
2) հաջորդ հաշվարկային ժամանակաշրջանի տեխնիկատնտեսական ցուցանիշների կանխատեսումների մասին,
3) տեխնիկական վերակառուցման, վերականգնման և արդիականացման երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի և դրանց իրականացմանն ուղղված ֆինանսական ներդրումների մասին:

Ներկայացված ֆինանսատնտեսական ծրագրերը պետք է հիմնավորված լինեն համապատասխան հաշվարկներով և ենթակա են համաձայնեցման Հանձնաժողովի հետ:».

բ. ուժը կորցրած ճանաչել Պայմանների 6.12 և 6.18 կետերը.

3) Որոշման 3-րդ կետով «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված՝ ջերմային էներգիայի փոխադրման N0015 լիցենզիայի պայմաններում (այսուհետ՝ N0015 լիցենզիայի պայմաններ) կատարել հետևյալ փոփոխությունները.

ա. N0015 լիցենզիայի պայմանների 5.11 կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«5.11 Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ է ներկայացնում Հանձնաժողով, ինչպես նաև տեղեկատվություններ՝

1) տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների կողմից կատարված ստուգումների արդյունքների մասին,
2) հաջորդ հաշվարկային ժամանակաշրջանի տեխնիկատնտեսական ցուցանիշների կանխատեսումների մասին,
3) տեխնիկական վերակառուցման, վերականգնման և արդիականացման երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի և դրանց իրականացմանն ուղղված ֆինանսական ներդրումների մասին:

Ներկայացված ֆինանսատնտեսական ծրագրերը պետք է հիմնավորված լինեն համապատասխան հաշվարկներով և ենթակա են համաձայնեցման Հանձնաժողովի հետ:».

բ. ուժը կորցրած ճանաչել N0015 լիցենզիայի պայմանների 5.14 և 5.20 կետերը.

4) Որոշման 3-րդ կետով «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված՝ ջերմային էներգիայի բաշխման N0016 լիցենզիայի պայմաններում (այսուհետ՝ N0016 լիցենզիայի պայմաններ) կատարել հետևյալ փոփոխությունները.

ա. N0016 լիցենզիայի պայմանների 6.11 կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«6.11 Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ է ներկայացնում Հանձնաժողով, ինչպես նաև տեղեկատվություններ՝

1) տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների կողմից կատարված ստուգումների արդյունքների մասին,

2) հաջորդ հաշվարկային ժամանակաշրջանի տեխնիկատնտեսական ցուցանիշների կանխատեսումների մասին,

3) տեխնիկական վերակառուցման, վերականգնման և արդիականացման երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի և դրանց իրականացմանն ուղղված ֆինանսական ներդրումների մասին:

Ներկայացված ֆինանսատնտեսական ծրագրերը պետք է հիմնավորված լինեն համապատասխան հաշվարկներով և ենթակա են համաձայնեցման Հանձնաժողովի հետ:».

բ. ուժը կորցրած ճանաչել N0016 լիցենզիայի պայմանների 6.14 և 6.20 կետերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ռ.ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ք. Երևան
11 հուլիսի 2012թ.
ժամը 16^{00}